

Մեր տանը և տնամերձ հողամասին հարակից՝ Սունդուկյան փող. հ.22 հասցեի տան և տնամերձ հողամասի տարածքում **բազմաբնակարան բնակելի շենքի** կառուցման համար նշված տան սեփականատեր Անահիդա Օդաբաշյանին Երևանի քաղաքապետի կողմից **խախտումներով հագեցված** նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) է տրամադրվել:

Սկսվել է մի գործընթաց, ըստ որի, մեր բնակելի տանը և տնամերձ հողամասին հարակից, **առանց ապահովելու անհրաժեշտ նորմատիվային հեռավորությունը, փորձ է արվում կառուցել բազմաբնակարան բնակելի շենք, դրանով իսկ խախտելով ապահով բնակվելու մեր սահմանադրական իրավունքը, վտանգելով մեր կյանքը:**

Այն հանգեցնելու է նաև մեր կենսագործունեության միջավայրի վատթարացմանը՝ սահմանափակելով մեր սենյակների լուսավորությունը, ստվերելով տնամերձ հողամասը (բակը, որտեղ կան ծառեր և թփեր), այն զրկելով արևի անմիջական ներթափանցումից և վերածելով ստվերոտ, խոնավ տարածքի:

Այդ ամենը իրականացվում է անտեսելով հարակից տների սեփականատերերի համաձայնության առկայության անհրաժեշտ պայմանը (որի մասին նշվում է նաև ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից մեզ հասցեագրված գրությունում), խախտելով ՀՀ կառավարության 28.10.1998թ. «Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը սահմանելու մասին» թիվ 660 որոշմամբ սահմանված պահանջը:

Մեր բնակելի տանը փաստացի վնասներ պատճառելու գործընթացը սկսվեց ճարտարապետահատակագծային առաջադրանքից հետո Երևանի քաղաքապետի կողմից քանդման թույլտվության տրամադրմամբ, որի համաձայն քանդվեցին առկա շինությունները: Հատկանշական է, որ քանդման աշխատանքները կատարվեցին անտեսելով հարակից տան առկայությունը, քանի որ քանդման աշխատանքները կատարելիս մեր բնակելի տանը հասցվեց որոշակի վնաս, որի հետևանքով քանդված տան ուղղությամբ մեր տան արտաքին կրող պատում առաջացան տեխնիկական վիճակը վտանգող ճաքեր: Այսպիսով մեր գույքին պատճառվեց որոշակի վնաս:

Նշենք, որ ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրմամբ խախտվում են Երևան քաղաքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթով, ՀՀ կառավարության 15.12. 2005թ. թիվ 2330-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծում ամրագրված դրույթները, ըստ որի, նշված հատվածը հանդիսանում է **անհատական բնակելի տներով ցածրահարկ բնակելի կառուցապատված տարածք:**

Անտեսելով անհատական բնակելի տներով տարածքի ցածրահարկ կառուցապատված լինելու հանգամանքը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի **պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Մեդոյանը** իր գրությամբ վկայակոչում է Արաբկիր համայնքի գոտևորման նախագիծը՝ նշելով, որ այդ հատվածը հանդիսանում է բազմաբնակարան բազմահարկ բնակելի կառուցապատման գոտի:

Մակայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից մեզ տրամադրված Արաբկիր թաղային համայնքի տարածքի գոտևորման նախագծի «Գործառնական գոտևորում» դրվագից պարզ է դառնում, որ Սունդուկյան փող. 22 հասցեի տարածքը գտնվում է ոչ թե բազմաբնակարան բնակելի կառուցապատման գոտևում, ինչպես նշում է պարոն Սեդոյանը, այլ հեռանկարում հանդիսանում է **ընդհանուր օգտագործման կանաչ գոտև հատված, որտեղ, ըստ գոտևորման նախագծի, բնակելի նոր կառուցումներն արգելվում են:**

Այսպիսով, բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման համար ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրվել է **Երևան քաղաքի գլխավոր հատակագծում և Արաբկիր թաղային համայնքի տարածքի գոտևորման նախագծում ամրագրված դրույթների խախտմամբ:**

Նշենք, որ Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքի համաձայն, գոտիավորմամբ սահմանված պահանջներին հակասող քաղաքաշինական գործունեությունն արգելվում է:

Ճարտարապետահատակագծային առաջադրանքը *տրամադրվել է փաստացի տվյալների աղավաղմամբ, հակասությունների հազեցվածությամբ և չափորոշիչների անորոշությամբ,* նպաստելով նորմատիվային պահանջների անտեսմանը և խախտմանը: Այսպես.

- Ենթակա է ճշտման օբյեկտի ռիսկայնությունը:

- Չի հստակեցված նախագծային փաստաթղթերի կազմելու փուլայնությունը:

- Աղավաղված են «կից հողամասեր» տողի տվյալները, քանի որ հարակից հողամասերում գտնվում են բնակելի տներ, այլ ոչ թե բնակելի շենքեր:

- Չի հստակեցված «ստորգետնյա/կիսաստորգետնյա» չափորոշիչը, որի հստակեցումը, համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գրության, կարող է առաջացնել օբյեկտի ռիսկայնության աստիճանի կատեգորիայի և դրա հետ կապված նախագծման թույլտվության համապատասխան կետերի փոփոխություն:

- Առանց նշումների է թողնվել հանգուցային պահանջ հանդիսացող *կառուցապատման խտությունը, որի կիրառման դեպքում կբացառվի բազմաբնակարան շենքի կառուցման հնարավորությունը:*

- Կառուցապատման 60%-ի կիրառումը նույնպես բացառվում է, քանի որ ըստ քաղաքաշինական նորմերի այն չպետք է գերազանցի 40%-ը:

- Կողաճակատների համար նախատեսված խուլ՝ *առանց լուսային բացվածքների* պատերի պահանջի նախատեսմանը հակառակ թույլատրվել է նախատեսել վերնափեղկեր, բառախաղի միջոցով համարելով դրանք «կահավորում»: Նշենք, որ վերնափեղկերը հանդիսանում են նույն լուսային բացվածքները և դրանց առկայությամբ ճակատները չեն կարող համարվել խուլ և դրանք չեն հանդիսանում կահավորում: Վերջիններիս առկայությամբ *խախտվում է նաև դեպի հարևան հողամասեր դիտելիությունը բացառելու նորմատիվային պայմանը և պատի հրակայունության աստիճանը,* որի հետևանքով խստացվում, մեծանում են նորմատիվային հեռավորությունները:

- Հատկանշական է այն, որ անմիջապես կից գտնվող մեր բնակելի տան բարձրության անտեսմամբ, որպես ելակետ ընդունվել է *արևմտյան հարևանությամբ գոյություն ունեցող բնակելի տան բարձրությունը,* որը ի դեպ ներկայացված էսքիզի

հատակագծում նշված է հինգ հարկանի, սակայն իրականում այն բաղկացած է ընդհամենը երեք ու կես հարկերից:

- Անտեսված է քաղաքաշինական նորմի պահանջը, որը նախատեսում է կիրառել անհրաժեշտ քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ՝ համաձայն համապատասխան ոլորտի նորմատիվ փաստաթղթերի: Քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական միջոցառումներով հստակ սահմանվում են, ըստ աղյուսակի՝ տարբեր հարկայնությամբ շենքերի հնարավոր փլուզման տարածման գոտիները՝ ***դեղին գծերով***: Բազմաբնակարան բնակելի շենքի բարձրությունը, ըստ առաջադրանքի ընդունելու դեպքում, դեղին գծերի կառուցման դեպքում հարակից տնից երկար կողմի ուղղությամբ նվազագույն հեռավորությունը պետք է կազմի 9.1մ, որը բացառում է նշված շենքի կառուցման հնարավորությունը:

Ակնհայտ է, նաև այն հանգամանքը, որ կառուցապատման մակերեսի սակավության հետևանքով հնարավոր չէ ապահովել բազմաբնակարան շենքի սպասարկման համար անհրաժեշտ հակահրդեհային նորմերը, բացառելով հետիոտն անցումների, ճանապարհների և հրշեջ մեքենաների առնվազն /6.0մ/ լայնությամբ մոտեցման հնարավորությունը: Բացի այդ նշված տան և տնամերձ հողամասի մակերեսում **անհնար կլինի կազմակերպել նաև նորմատիվային պահանջներին համապատասխան շինարարական հրապարակ, ապահովելով փոսորակի, շինարարության անվտանգ իրականացումը**: Հետևաբար նշված հատվածում բազմաբնակարան շենքի շինարարությունը **կապարունակի անկանխատեսելի վտանգներ՝ ազդելով հարակից բնակելի տների տեխնիկական վիճակի և դրանց կայունության վրա**: Դրա ապացույցն է հանդիսանում, ինչպես նշվեց Անախդա Օդաբաշյանին տրամադրված քանդման թույլտվության հիման վրա, վերջինիս բնակելի տան քանդման ընթացքում մեր բնակելի տան կրող պատին հասցված վնասները:

Ձևական բնույթ է կրում նաև էսքիզային նախագծին կցված առանց չափորոշիչների հստակեցման կազմված ***ինստյացիայի հաշվարկը***:

Արդյունքում պարզ է դառնում, որ մեր արդարացի բողոքների անտեսման պայմաններում, նման խախտումներով հագեցված փաստաթղթի տրամադրումը իրականացվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի աշխատակիցների կամայականության արդյունքում: Այդ են վկայում մեր բողոքների և տեղեկատվություն ստանալու հարցումների վերաբերյալ առանց փաստերի ուսումնասիրման անհիմն պատասխանները: Ակնհայտ է, որ առանձին տան և տնամերձ հողամասի տարածքում կառուցապատումը չի հանդիսանում **հատուկ կարգավորման ծրագիր**: Հետևաբար այն **հատուկ է** պատվեր կատարելու տեսակետից:

Անդրադառնալով կառուցապատողի որդու՝ Երևանի քաղաքապետի խորհրդական Արթուր Սարգսյանի կողմից նշված փորձաքննությունների դրական եզրակացությունների առկայությանը, հարկ ենք համարում նշել, որ Երևանի քաղաքապետի կողմից տրամադրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա Անախդա Օդաբաշյանի կողմից ներկայացված աշխատանքային նախագծում առկա խախտումների վերաբերյալ առկա է ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից մեզ հասցեագրված գրությունը: Հետևաբար ակնհայտ է այն փաստը, որ

**նախագծի փորձաքննությունը կազմված է ոչ արժանահավատ, քանի որ նախագծային փաստաթղթերը պարունակելով տեսչական մարմնի կողմից թվարկված խախտումները, չի կարող ամփոփվել դրական եզրակացությամբ:**

Ինչ վերաբերվում է Երևանի քաղաքապետի խորհրդական Արթուր Սարգսյանի կարծիքին, որ մենք մեր բողոքներով նպատակ ունենք ժամանակ ձգձգել՝ դրանով փորձելով կառուցապատողին պարտադրել ինչ-որ համաձայնությունների ձեռքբերում, ապա հայտնում ենք, որ մենք երբևէ նպատակ չենք ունեցել և չունենք ինչ-որ շահավետ գործարքների գնալ և ինչ-որ համաձայնություններ ձեռք բերել կառուցապատողի հետ: Մեր նպատակն է, ինչպես փաստում է մեր դիմումների բովանդակությունը, ՀՀ օրենքներով, քաղաքաշինական նորմատիվային փաստաթղթերով և այլ իրավական ակտերով ամրագրված քաղաքաշինական նորմերի և պահանջների պահպանումը և քաղաքաշինական ծրագրային և նորմատիվային փաստաթղթերին հակասող քաղաքաշինական ծրագրի կասեցումը և խախտումներով տրամադրված ճարտարապետահատակագծային առաջադրաքի չեղարկումը:

Նշենք նաև, որ ՀՀ քաղաքաշինության բնագավառը վերահսկող և բնագավառում տեղ գտած անօրինականությունները կանխարգելող միակ մասնագիտական կառույցը՝ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը, **չի կատարում օրենքով իրեն վերապահված լիազորությունները և չի իրականացնում պատշաճ վերահսկողություն նշված հարցի առնչությամբ**, քանի որ մեր բազմաթիվ դիմում-բողոքները՝ Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվող անօրինականությունների ընթացքը կասեցնելու և **քաղաքաշինական ծրագրային և նորմատիվային փաստաթղթերին հակասող ճարտարապետահատակագծային առաջադրանքը չեղարկելու և խախտումներ կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, մնացել են անհետևանք:**

Ակնհայտ է, որ Անաիդա Օդաբաշյանի անվամբ նախաձեռնվել է **կոպիտ քաղաքաշինական խախտումներ և անկանխատեսելի հետևանքներ պարունակող շինարարական բիզնես ծրագիր, որը սպառնում է մեր բնակելի տան կայունությանը, նպաստելով տան փլուզմանը:**

Ակնհայտ է, որ այդ ամենը իրականացվում և զուգորդվում է վերը թվարկված կոպիտ խախտումների անտեսմամբ, գերադասելով միայն սեփական շահերը:

Ակամա հարց է առաջանում՝ ինչու՞ է Երևանի քաղաքապետարանը ցուցաբերել անհավասար մոտեցում՝ մեր տանը նորմալ պայմաններում և անվտանգ ապրելու մեր իրավունքը ստորադասելով կառուցապատողի բիզնես շահերին, ինչու՞ է փորձաքննություն իրականացնող կազմակերպությունը բազմաթիվ խախտումներ պարունակող աշխատանքային նախագծին տվել դրական եզրակացություն, ինչու՞ պատասխանատվության չեն ենթարկվում նախագծող և ոչ արժանահավատ փորձաքննություն իրականացրած կազմակերպությունների աշխատակիցները, ինչու՞ տեսչական մարմինը չի իրականացնում պատշաճ վերահսկողություն, ինչու՞ են տարբեր մարմիններին ուղղված մեր բազմաթիվ դիմումները, բողոքները և տեղեկատվության հարցումները մնում անհետևանք կամ անպատասխան:

Սունդուկյան 24ա տան սեփականատերեր  
Գայանե, Հասմիկ, Կարինե Պետրոսյաններ